ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն .....
«.....».....2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

9-րդ դասարան

Հովակիմյան Սվետիկ Թելմանի

2023-2024 ուսումնական տարի

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Աշակերտների քանակը դասարանում ա) աղջիկ բ) տղա	34 14 20
2. Անապահով ընտանիքների երեխաների թիվը	5
3. Երեք և ավելի դպրոցահասակ երեխա ունեցող ընտանիքների թիվը	6
4. «Ռիսկային խմբի» ընտանիքների թիվ	2
5. Միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվ	
6. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ	
7. Դժվար դաստիարակվող երեխաներ	1
8. ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվ	

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են՝ սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն նպաստելը: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարություն էլ. գրանցամատյանում:

Բացահայտել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ համագործակցելով ՄԿԱ գծով փոխտնօրենի, հոգեբանի , ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի հետ:

Տարեվերջյան հաշվետվության մեջ ներկայացնել սովորողների առաջադիմության, ինչպես նաև հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն տնօրինությանը:

Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն.

- Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, նրա հերոսական էջերին, հայոց եկեղեցիների պատմությանը.
- Գնալ մշակութային կենտրոններ, զրույց անցկացնել քրիստոնեության մասին:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Այցելություններ թանգարաններ, պատկերասրահ, տեսարժան վայրեր՝ Մատենադարան, Տառերի պուրակ,Էրեբունի արգելոց-թանգարան:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Կազմակերպել հայրենասիրական արշավներ.
- Զրույցներ՝ նվիրված հայրենիքին, հայրենասիրությանը, հայրենիքի հերոս պաշտպաններին:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանընպաստող ակտիվ միջոցառումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ, էստաֆետային խաղեր, սպորտլանդիաներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն աշխատանքի, աշխատատեղի, աշխատանքային գործիքների նկատմամբ.
- Կազմակերպել շաբաթօրյակներ, ծառատունկեր.
- Զրույցներ շրջապատի մաքրության կարևորության մասին:

ՄԱՐԴԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆ Է...

- Բնապահպանական դաստիարակություն .
- Զրույցներ շրջապատի, շրջակա միջավայրի մաքրության պահպանման մասին.
- Զրույցներ «Պահպանենք և մաքուր պահենք մեր շրջապատը », «Հոգատար վերաբերմունք բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ»:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

- Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը: Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ:
- Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքներում

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

9-րդ դասարան /34 ժամ/

Ուսումնական շաբաթ	Ուսումնա_դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	կատարողներ
1.	Զրույց <<Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները>> թեմայով: Նպատակը աշակերտներին իրազեկել աշակերտական էթիկայի և դպրոցի կարգապահական կանոններին:	07.09.2023	Դասղեկ աշակերտ
2.	Քննարկել աշակերտների հետ նրանց նախասիրությունը մասնագիտության ընտրության գործընթացում:	14.09	Դասղեկ աշակերտ
3.	<<ՀՀ անկախությունը>>: Հայրենասիրական դաստիարակություն:	21.09	Դասղեկ աշակեր
4.	Մեդիագրագիտություն: Նպատակը իրազեկել աշակերտին ինչպես վերլուծել ցանկացած տեղեկատվություն:	28.09	Դասղեկ աշակերտ
5.	Իմ իրավունքները և պարտականությունները դպրոցում: Նպատակը աշակերտներին իրազեկել դպրոցում իրենց պարտականությունների և իրավունքների հետ:	05.10.	Դասղեկ աշակերտ
6.	10 հուշում մեդիագրագետ քաղաքացուն: Նպատակը իրազեկել աշակերտներին մեդիագրագետ լինելու քայլերի հաջորդականությունները:	12.10	Դասղեկ աշակերտ
7.	Օդային տագնապ: Նպատակը իրազեկել աշակերտներին օդային տագնապի ժամանակ իրականացվող անվտանգ կանոների հետ:	19.10	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
8.	Զրույց և քննարկում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգը և խնդիրները» թեմայով: Պաշտպանության կոլեկտիվ միջոցները և միջոցառումները:	02.11	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
9.	Մեդիագրագիտություն: Տարբերակել ապատեղեկատվութ յունը և մանիպուլյացիան համացանցում:	09.11	Դասղեկ աշակերտ
10.	Մեդիագրագիտություն: Փաստերի ստուգման հայալեզու հարթակներ:	16.11	Դասղեկ աշակերտ

11.	Զրույց և քննարկում <<Աշակերտների գործողությունները՝ տեխնածին վթարների ծամանակ>> թեմայով:	23.11	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
12.	Անձի ինքնաբացահայտման և ինքնաճանաչման կարևորությունը մասնագիտության ընտրության հարցում:	30.11	Դասղեկ աշակերտ
13.	«Ի՞նչ է երկրաշարժը»: Իրազեկել թե ինչպես պաշտպանվել երկրաշարժից: Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպան վելու վարքականոնները:	07.12	Դասղեկ աշակերտ ՆԶՊ ուսուցիչ
14.	Զրույց <<Հոգատար վերաբերմունք միմյանց նկատմամբ>> թեմայով: Ձևավորել ջերմ հարաբերություններ, ընկերասիրություն և ինքնուրույնություն:	14.12	Դասղեկ աշակերտ
15.	Թրաֆիքինգի սահմանումը: Մարդկանց շահագործման կանխարգելմանը որքան ծանոթ լինեն, այնքան պաշտպանված կլինեն:	21.12	Դասղեկ Աշակերտ
16.	Նախընտրելի մասնագիտության տեղն ու դերը մասնագիտությունների աշխարհում:	11.01.2024	Դասղեկ Աշակերտ
17.	«Հայրենասեր լինել նշանակում է ....» քննարկում	18.01	Դասղեկ Աշակերտ
18 .	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն: «Մեր պատմության փառահեղ էջերը»	25.01	Դասղեկ Աշակերտ
19.	Մասնագիտական Կողմնորոշում:Նպատակի սահմանումը և դրան հասնելու ձևերը:	01.02	Դասղեկ Աշակերտ
20.	«Կոնֆլիկտների ծագումն ու հաղթահարումը» թեմայով զրույց: Նպատակը համերաշխ կոլեկտիվի ձևավորում:	08.02	Աշակերտ Դասղեկ
21.	«Համակարգիչն ընկեր է, թե՞ թշնամի » թեմայով զրույց: Իրազեկել համակարգչի դրական և բացասական կողմերը:	**15.02**	Դասղեկ Աշակերտ
22.	Առցանց անվտանգություն: Նպատակը Google-ում փնտրելու 19 եղանակ, որոնք կօգնեն կատարել անվտանգ և արագ որոնում:	22.02	Դասղեկ Աշակերտ
23.	<<Եկեղեցին և ազգը>> թեմայով քննարկում: Աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	29.02	Դասղեկ Աշակերտ

24.	Երեխաների առցանց անվտանգության ապահովումը: Համացանցի միջոցով թրաֆիքինգի զոհերի հավաքագրում:	07.03	Դասղեկ Աշակերտ
25.	<<Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները>> թեմայով զրույց:	14.03	Դասղեկ Աշակերտ
26.	«Եթե ես լինեի ...» թեմայով քննարկում, նպատակն է վեր հանել կարողություններն և հմտությունները:	21.03	Դասղեկ Աշակերտ
27.	Առողջ ապրելակերպ Անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը:	04.04	Դասղեկ Աշակերտ
28	Առցանց անվտանգություն: Նպատակը՝ ինչպես պաշտպանել անձնական հաշիվները, տարածված 25 գաղտնաբառեր, որոնք պետք չէ օգտագործել:	11.04	Դասղեկ Աշակերտ
29.	Բուլինգի դեպքերի կանխումը դպրոցում	18.04	
30.	«Հայոց մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունները, նրանց մոտ սերմանել հայրենասիրություն	25.04	Աշակերտ Դասղեկ
31.	«Բարեկամներ և թշնամիներ» քննարկման միջոցով ներկայացնել հայ–ադրբեջանական խնդիրների ծագման պատճառները:	02.05	Աշակերտ Դասղեկ
32.	«Հաղթում է նա, ով չի նահանջում»: «Մարդ, որին կուզեի նմանվել» թեմաներով բաց քննարկում:	09.05	Դասղեկ Աշակերտ
33.	<<Համացանցի լեզվի բացասական ազդեցությունը հայոց լեզվի վրա>> թեմայով զրույց:	16.05	Դասղեկ Աշակերտ
34.	2023-2024 ուստարվա ամփոփում	23.05	Դասղեկ Աշակերտ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը - Անցկացման վայրը՝ դպրոց կամ այլ տեղ
	Գիտելիքի օր
	Անկախության տոն
	Ուսուցչի օր
	Հիշատակի օր (երկրաշարժ)
	Ամանորյա միջոցառում
	Հայոց բանակի օր
	Տյառնընդառաջ
	Մայրենի լեզվի միջազգային օր
	Ծառատունկ
	Սուբ. Հարություն կամ Զատիկ